

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (23-րդ տարի)

Յունիս 2023 (Լ տարի թիւ 10)

Այս թիւով.....

Յունիս Ամսուան Բացատրական
Տօնացոյց Էջ 1-12

Ս. Գրիգոր Լուսաւորչի Վիրապէն
ելքը
Եղիա մարգարէ

Սուրբ Հոփսիմեանց կոյսեր

Տօն Կաթուղիկէ Սբ. Էջմիածին

Էջմիածին

Ս. Կոստանդիանոս Կայսեր եւ
անոր մօր՝ Հեղինէի յիշատակութեան օր

Մեծն Ներսէս Հայրապետ
Վերամուտ՝ 17 Սեպտեմբեր 2023 Էջ 12



Կ...

Կիրակնօրեայ Դպրոց

Ամսուան Համարը

«Ժողովուրդէն ոմանք մանուկներ
բերին Յիսուսի, որպէսզի Ձեռքը դնէ
անոնց վրայ, քայց աշակերտները
ասատեցին բերողները: Երբ Յիսուս
տեսաւ, բարկացաւ եւ ասատեց
աշակերտները ըսելով.

- Ձգեցէք որ մանուկները ինծի գան,
արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ
այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը: Լաւ գիտցէք, ով որ
Աստուծոյ արքայութիւնը չ'ընդունիր
փոքրիկ մանուկի մը պէս, հոն պիտի
չմտնէ»: *Մարկոս 10.13-15*

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Յունիս ամսուան բացատրական տօնացոյց

Վիր. 4	Յիշատակ Եղիա մարգարէի
Բշ. 5	Սբ. Հռիփսիմեանց կոյսեր
Գշ. 6	Ս. Գայիանեանց Կոյսեր
Եշ. 8	Սրբոց Յովհաննու Կարապետին եւ Աթանազիւնեայ եպիսկոպոսին
Շբթ 10	Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Ելն ի Վիրապէն)
Վիր. 11	Տօն Սրբոյ Էջմիածնի
Գշ. 13	Ս. Նունէ եւ Մանէ Կոյսեր
Շբթ. 17	Ս. Մեծն Ներսէս Հայրապետ եւ Խաղ եպիսկոպոս
Վիր. 18	Բարեկենդան Սբ. Լուսաւորչի Պահոց
Գշ. 20	Ս. Կոստանդիանոս եւ անոր մայրը Հեղինէ

Սբ. Գրիգոր Լուսաւորչի Վիրապէն Ելքը

301 թուականին Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ Խոր Վիրապէն դուրս գալու յիշատակութեան օրն է, որ սկիզբ դարձաւ հայոց մեծ դարձի:

Հայոց հեթանոս Տրդատ արքայի հրամանով Հռիփսիմեան և Գայիանեան կոյսերը նահատակուեցան: Այդ դեպքէն ետք արքան ու արքունի պալատականները ծանր հիւանդացան: Տրդատի քոյրը երազ կը տեսնէ, որ արքայի հիւանդութիւնը կարող է բուժել միայն Խոր Վիրապին մէջ բանտարկուած Գրիգորը: Եւ ահա 13-ամեայ բանտարկութիւնէն ետք ազատ կ'արձակուի հայոց ամենամեծ սուրբը:

Ս. Գրիգորի աղօթքներով կ'ապաքինուի արքան՝ դառնալով Գրիգոր Լուսաւորչի քրիստոնէական քարոզչութեան լծակիցը: Քրիստոնէութիւնը կը հռչակուի հայոց պետական կրօն: Մեծաշուք հանդիսաւորութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչն կ'ուղարկուի Կեսարիա, ուր կը ձեռնադրուի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ առաջին հովուապետ:

Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելքը Վիրապէն Հայ Եկեղեցւոյ մեծ տօներէն է, որ կը յիշատակուի է Ս. Հռիփսիմեանց և Ս. Գայիանեանց տօներուն յաջորդող շաբաթ օրը: Տօնական այդ օրը բոլոր եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագ կը մատուցուի:

Եղիա մարգարե

Հին Կտակարանի մեծ մարգարեներն է, որ յայտնի է Տիրոջ հանդեպ ունեցած իր հաւատարմութեամբ, հաւատուրաց Աքաաբ թագաւորի ու անոր կռապաշտ Յեզաբել թագուհիի կողմէ Իսրայելի մէջ սերմանուած կռապաշտութեան դէմ նախանձախնդիր պայքարով:

Եղիա մարգարեն ապրած է եւ գործած է Քրիստոսէ առաջ 9-րդ դարուն: Անոր մասին կը պատմուի Գ. Թագաւորաց (17-18) եւ Դ. Թագաւորաց (1-2:1-15) գիրքերուն մէջ, անոր անունը կը յիշատակեն նաեւ աւետարանիչները:

Յիսուսի այլակերպութեան ընթացքին (Մատթ. 17.1-13, Մար. 9.2-13, Ղուկ. 9. 28-36) գրուած է.

«Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ»...: ...Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի.

- Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ: Յիսուս պատասխանեց.

- Ճիշդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամեն ինչ. բայց գիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է...: Այս ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան»:

Գ. Թագաւորաց գիրքին մէջ կը կարդանք, թէ ինչպէս Եղիան, իբրեւ Աստուծոյ խօսքի ճշմարիտ բանբեր, աստուածային տնօրինութեամբ յայտնուած է հաւատուրաց Աքաաբի առջեւ եւ յայտարարած է սպասուող երաշտի մասին:

Եղիա Աքաաբն ու ժողովուրդը գիտակցութեան բերելու համար Աստուծմէ խնդրեց որ անձրեւը կէցնէր: Երեք ու կէս տարի ետք Եղիա Կարմեղոս լեռը կանչեց թագաւորը, եւ բազմահազար ժողովուրդին առջեւ ծաղրեց կուռքերն ու չաստուածները, ամօթահար ըրաւ անոնց պաշտօնեաները, աղօթեց եւ խնդրեց Աստուծմէ որ երկինքէն կրակ իջեցնելով այրէր իր գոհը, ընդունէր իր աղօթքը եւ անձրեւ զրկէր երկրին: Աստուած ընդունեց Եղիային աղօթքը, երկինքէն կրակ իջեցնելով այրեց մասնուցուած գոհը եւ ապա անձրեւ զրկեց, ու բոլոր բազմութեան յայտնի եղաւ թէ միայն Եհովան է ճշմարիտ Աստուածը եւ կուռքերը փուճ են:

Եղիա մարգարէին վերագրուած է զանազան հրաշագործութիւններ. թէ ինչպէս աստուածային զօրութեամբ անպակաս պահեց այրի կնոջ ալիւրի և իւղի ամանները, Յարութիւն տուաւ անոր մահացած որդւոյն եւ այլն:

Եղիան մահ չտեսաւ այլ երկինք վերցուեցաւ.

«Երբ անոնք (այսինքն Եղիան եւ Եղիսէն) խօսելով կ'երթային, ահա՛ կրակէ կառք մը եւ կրակէ ձիեր երեւցան, զանոնք իրարմէ գատեցին ու Եղիա մորթկով երկինք բարձրացաւ»: (Դ. Թագ. 2.11)

Սուրբ Հռիփսիմեանց Կոյսեր



Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ վասն հաւատքի նահատակութեան օրինակները անպակաս են: Այս օրինակներէն մէկն է Հռիփսիմէ անունով կոյս մը որ յաջողեցաւ հաւատքի ոյժով դիմադրել օրուան թագաւորին Տրդատ Գ.ին:

Ս. Հռիփսիմէ քրիստոնէայ հաւատացեալ մըն էր որ Հռոմի մէջ քրիստոնէաներու դէմ Դիոկղետիանոս կայսրին կողմէ կատարուած հալածանքներէն փախչելով կ'ապրէր Գայիանէ կոյսի գլխաւորած հաւատացեալ կոյսերու խումբին հետ: Այս խումբը հաստատուած էր Հնձաններ կոչուած վայրի մը մէջ, Վաղարշապատէն ոչ շատ հեռու:

Հայաստանի այդ ժամանակաշրջանի թագաւորը՝ Տրդատ Գ., որ այդ ժամանակ տակաւին հեթանոս էր, ուզեց ամուսնանալ Հռիփսիմէի հետ: Հռիփսիմէն անշուշտ մերժեց, որովհետեւ չէր ուզեր կին ըլլալ կռապաշտ թագաւորին: Հռիփսիմէի ժխտական կեցուածքին որպէս հետեւանք, թագաւորը սպաննել տուաւ ոչ միայն Հռիփսիմէն, այլ նաեւ Գայիանէն եւ անոր ընկերակիցները: Այս դէպքէն 9 օրեր ետք Խոր Վիրապէն ազատ արձակուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ թաղեց նահատակները եւ զանոնք դասեց սուրբերու կարգին: Այսպէս, նահատակուած 37

կոյսերը կոչուեցան Հռիփսիմեանց կամ Գայիանեանց կոյսեր որոնք մեր եկեղեցիներէն ներս կը յիշատակուին Սուրբ Էջմիածնի տօնին նախորդող Երկուշաբթին եւ Երեքշաբթին:

Ստեփանոս Օրբելեանը կը գրէ թէ մինչեւ 13-րդ դար կաթողիկոսաբանին մէջ կը պահուէին Հռիփսիմէի մասունքները, որոնք Հռոմկլայի գրաւման ժամանակ (1292) մամլուքները տարած են Եգիպտոս որպէս աւար: Հռիփսիմէի գերեզմանը կը գտնուի Էջմիածնի Սուրբ Հռիփսիմէ վանքին մէջ:



Էջմիածնի Ս. Գայիանէ Վանքը



Էջմիածնի Ս. Հռիփսիմէ Վանքը

Տօն Կաթողիկէ Սբ. Էջմիածնի

Հայոց եկեղեցւոյ մեծ տօներէն է Սբ. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքով Կաթողիկէ Սբ. Էջմիածնի հիմնադրման տօնը: Ըստ աւանդութեան՝ Խոր Վիրապի բանտարկութենէն դուրս գալէ ետք, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ կը տեսնէ նշանաւոր տեսիլքը, ուր Միածինը, ողողուած հրաշափառ լոյսով, կ'իջնէ երկինքէն եւ ոսկէ ուռնով կը զարնէ Սանդարամետի գետնափոր մեհեանը՝ ցոյց տալով այն տեղը, ուր պէտք է կառուցուէր հայոց սուրբ հաւատքի տաճարը: Այստեղէն է յառաջացած «Էջմիածին» անունը, այսինքն էջ՝ (գրաբար) իջաւ Միածինը:

Սբ. Գրիգոր Լուսաւորիչը իր տեսիլքը կը պատմէ հայոց Տրդատ թագաւորին: Արքայի հովանաւորութեամբ կը կառուցուի Սբ. Էջմիածնի Աստուածածնին նուիրուած Կաթողիկէ Մայր Տաճարը: Քրիստոսի իջման տեղն ալ կառուցուած է Իջման Սբ. Սեղանը:

Էջմիածնի կառուցման աշխատանքներուն ժողովուրդի հետ մասնակցած են նաեւ Տրդատ թագաւորը եւ Աշխէն թագուհին: Ըստ Մաղաքիա պատրիարք Օրմանեանի Ծիսական բառարանին «կաթողիկէ» կը նշանակէ աթոռանիստ մայր եկեղեցի, եւ այս անունը յատուկ տրուած է Էջմիածնի Մայր տաճարին: Սակայն մէկ այլ իմաստով կաթողիկէ են անուանուած գմբէթ ունեցող բոլոր եկեղեցիներն ընդհանրապէս, իսկ աստուածաբանութեան մէջ այդ անուանումը համարուած է եկեղեցւոյ ընդհանրականութեան խորհրդապատկերը:

Այս երեք իմաստներն ալ կը համապատասխանեն Էջմիածնի Մայր Տաճարին, քանի որ այն աթոռանիստ եկեղեցի է, գմբէթաւոր եւ ընդհանրական է բոլոր հաւատացեալներու համար: Կաթողիկէ Սբ. Էջմիածնի տօնը կը նշուի Սբ. Զատիկէն 64 օրեր ետք կամ Հոգեգալստեան Կիրակիին յաջորդող երկրորդ Կիրակին:

Տօնի օրը կը մատուցուի Սբ. Պատարագ, իսկ ժամերգութիւններու ընթացքին այլ շարականներու հետ կ'երգուի նաեւ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը, որ գրած է 8-րդ դարու կաթողիկոս Սահակ Զորափորեցին:

Շարականը Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի եւ տաճարի կառուցման մասին է:

Էջմիածին


«Էջմիածին» կը կոչուի նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պաշտօնական հրատարակութիւնը որ կրօնական եւ պատմարանասիրական ամսաթերթ մըն է:

«Էջմիածնի Աւետարան» Փղոսկրեայ Աւետարան, հայ գրչութեան եւ մանրանկարչութեան ձեռագիր մատեան: ընդօրինակուած Յովհաննէս գրիչին կողմէ 989-ին:

«Էջմիածնի Հոգեւոր Ճեմարան» Հոգեւոր բարձրագոյն գիշերօթիկ ուսումնական հաստատութիւն հիմնուած 1945 Նոյեմբեր 1-ին Գեորգ Չորեքչեանի նախաձեռնութեամբ: 1998-ին Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ վերանուանուեր է Գեորգեան Հոգեւոր Ճեմարան:



Էջմիածնի Աւետարանին Փղոսկրեայ կազմը



Ս. Էջմիածնի Մայր Տաճար

Ս. Կոստանդիանոս կայսեր եւ անոր մօր՝

Հեղինէի յիշատակութեան օր

Կոստանդիանոս կայսրը պաշտօնապէս ազատեց Եկեղեցին աւելի քան 250 տարի տեւած հալածանքներէ եւ 313 թուականին Միլանի հրովարտակով քրիստոնէութիւնը թոյլատրելի կրօն հռչակեց, իսկ 324-ին՝ պետական կրօնք: Անոր օրով տեղի ունեցաւ Նիկիոյ 325 թուականի առաջին Տիեզերական ժողովը, որ դատապարտեց Արիոսին:

Կոստանդիանոսը իր օժանդակութիւնը բերած է Երուսաղէմի և Բեթլեհէմի տերունական սրբավայրերու փառահեղ տաճարներու շինութեան: Կոստանդիանոսը եղած է նաեւ մեծ զօրավար, որ մշտապէս յաղթած է պատերազմներուն: Ինչպէս աւանդութիւնը կը վկայէ, Հռոմի ինքնահռչակ կայսր Մաքսենտիոսի դէմ պատերազմի վճռական ճակատամարտին նախորդող երեկոյեան, Կոստանդիանոսին եւ զինուորներուն երկինքի մէջ կ'երեւի լուսեղէն խաչ մը որուն վրայ գրուած է, «Ա՛յս նշանով պիտի յաղթես»: Նոյն գիշերը, Կոստանդիանոս իր սաղաւարտին եւ իր բոլոր զինուորներուն վահաններուն վրայ խաչի նշանը դրոշմել տուաւ եւ խաչին զօրութեան ապաւինած յաջորդ օրը պատերազմի ելաւ ... եւ յաղթեց: Կոստանդիանոս յաղթական մուտք գործեց Հռոմէն ներս եւ ազատութիւն շնորհեց քրիստոնէաներուն: Կոստանդիանոս մահացած է 337 թուականին, մահուան մահիճին մէջ ընդունելով քրիստոնէական մկրտութիւնը:


Կոստանդիանոսի մայր Հեղինէ թագուհին եղաւ կայսեր գործակիցը անոր բարեպաշտական գործունէութեան մէջ: Անոր կը վերագրուի Քրիստոսի խաչափայտի գիւտը 327 թուականին: Երուսաղէմի մէջ Յուդա անունով մէկը թագուհիին մատնացուց կ'ընէ այն վայրը, ուր կարող էր գտնուէր Քրիստոսի եւ անոր հետ խաչուած երկու աւազակներու խաչափայտերը: Աւանդոյթի համաձայն՝ բարեպաշտ թագուհին Տիրոջ խաչափայտը գտնելու համար խաչերին հերթով կը մօտեցնէ է մահացած երիտասարդի մը դիակը: Քրիստոսի խաչափայտի գորութիւնէն երիտասարդը կը կենդանանայ: Խաչի գիւտէն յետոյ Երուսաղէմի Կիւրեղ Հայրապետը զայն կը բարձրացնէ ի տես հավատացյալներուն:

Հեղինէ թագուհին Երուսաղէմի եւ շրջակայքին եկեղեցիներ եւ կուսանոցներ կառուցել կու տայ: Մահացած է 330 թուականին քրիստոնէաներու սրտերուն թողելով բարի յիշատակ:



Միլվեսթր Ա. Հռոմի Պապը եւ Կոստանդիանոս կայսրը

Մեծն Ներսէս Հայրապետ



Ս. Մեծն Ներսէս պատարագ մատուցելու պահուն:
Երևան Ձեռ. 2639 էջ 250ա Ժողովածու 1672թ.
Ամբողջու վանք: Ծաղկող՝ Մահակ Վանեցի

Սուրբ Մեծն Ներսէս Ս. Գրիգոր Լուսաւորչի թորան թոռն է: Ան ուսանած է Կեսարիոյ մէջ: Հայրենիք վերադառնալէ ետք, Արշակ Բ. թագաւորը զինքը նշանակէ արքունի սենեկապետ, այնուհետեւ անոր շնորհելով հոգեւոր բոլոր աստիճանները, 353 թուին զինք կ'ուղարկէ Կեսարիա՝ օծուելու հայոց կաթողիկոս: Ըստ աւանդութեան՝ այնտեղ անոր հետ կը ձեռնադրուի նաեւ Սուրբ Բարսեղ Կեսարացին:

Մեծն Ներսէս կաթողիկոսական իր պաշտօնին գլուխն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց: Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, ամէն կողմ քահանաներ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար: Իր գահակալութեան ընթացքին Ս. Ներսէս

պայքարեցաւ պարսկական ազդեցութեան դէմ, արգիլելով պարսկերէնի ուսուցումը: Բացաւ նոր դպրանոցներ, որոնցմով նպաստեց թուլացած քրիստոնէական աւանդութիւններու վերահաստատման: Ան ամէն կերպով հոգ տարաւ, որպէսզի եկեղեցւոյ պաշտօնեաները զինուին գիտութեամբ եւ աստուածային իմաստութեամբ: Ս. Ներսէսի օրով մեծ ծաղկում ապրեցաւ վանականութիւնը: Կառուցուեցան բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ, որոնցմով լեցուեցաւ ողջ Հայոց աշխարհը:

Սուրբ Հայրապետը մեծ էր իր աղքատասիրութեամբ. ան երբեք ճաշի կամ ընթրիքի չէր նստեր առանց սեղանակից ունենալու աղքատներն ու կոյրերը, անդամալոյծներն ու ցաւագարները: Ան կը սիրէր անձամբ սպասաւորել ու դարմանել զանոնք:

371 թուին, երբ պարսից Շապուհ Բ. արքան մեծաքանակ զօրքով ներխուժեց Հայաստան, Ս. Ներսէսը ճակատամարտէն առաջ քաջալերեց Հայ մարտիկները, որ աներկիւղ եւ հաւատքով զինուած մարտնչին թշնամիին դէմ: Ինքը, բարձրանալով Նպաստ լերան գագաթը, մարտի ընթացքին բազկատարած կ'աղօթէր, մինչեւ որ հայոց զօրքը լիակատար յաղթանակ տարաւ:

Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի
2023-24 տարեշրջանի (44-րդ)

Վերամուտ՝
17 Սեպտեմբեր 2023